# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/652

«09» 06 2021 թ.

Ձեր

**«ԷՅ ԷՅ ՋԻ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ** (ՀՎՀՀ 04436154)
*Արմավիրի մարզ,ք. Վաղարշապատ*
*Նալբանդյան փ.59*
*Հեռ.093216022*
*Էլ.հասցե aag.holding.armenia@gmail.com*

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

### Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության /այսուհետ՝ պատվիրատու/ **«ԷՅ ԷՅ ՋԻ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ** -ի /այսուհետ՝ կատարող/ միջև կնքված N ՀՀ Ո ԳՀԾՁԲ- 2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 ծածկագրով 08.12.2020թ. պայմանագրի և 01.03.2021-ին կնքված ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագրի շրջանակում վերոնշյալ ընկերությունը պարտավորվել է ծառայությունները մատուցել սույն թվականի հունվարի 8-ից: Մայիս ամսվա ընթացքում ծառայությունները որոշ ՃՈ ստորաբաժանումներում կատարվել են թերի, ժամկետների խախտումներով և ոչ համապատասխան տեխնիկական բնութագրին:

01.06.2021թվականի դրությամբ համաձայն ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների ղեկավարների կողմից ներկայացված զեկուցագրերի թվով 7 ստորաբաժանումներում Էյ Էյ Ջի Հոլդինգ ՍՊԸ-ի կողմից մաքրման աշխատանքներ չեն իրականացվել:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուն կիրառում է պայմանագրի 2.1.3, 5 և 7.9 մասով սահմանված դրույթները:

Կից ներկայացվում են ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանումների կողմից մաքրման ծառայությունների անհամապատասխանությունների վերաբերյալ ՃՈ ներկայացված զեկուցագրերի, տեղեկանքների պատճենները և բացասական եզրակացությունները համապատասխան չափաբաժինների վերաբերյալ:

պարտականությունների մասը կատարվել է պատշաճ և համապատասխան տեխնիկական բնութագիր հավելված 1-ի:

Հարկ է նշել, որ պայմանագրով սահմանված ժամկետում պայմանագրի հավել-ված 1-ով սահմանված ծառայությունները կազմակերպության կողմից չեն կատարվել և խախտվել են պայմանագրի էական պայմանները: Հետևաբար, 2.1.3 ա) և բ) ենթակետի համաձայն՝ պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը, մասնավորապես՝ պայմանագիրը լուծվում է 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, և 7-րդ չափաբա-ժինների մասով ամբողջապես:

Հիմք ընդունելով պայմանագրի 5-րդ ենթակետի 1,2,3 պարբերությունների պա-հանջները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծում է 2020 թվականի դեկտեմբերի 8-ին կնքված ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ՄԱՔՐՄԱՆ-2 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Էյ Էյ Ջի Հոլդինգ ՍՊԸ -ին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ,գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Կոնվերսբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայանգրի տեսքով որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 4 333 000 (չորս միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամի չափով ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900008000698 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

**Ոստիկանությանգնդապետ** **Վ.Մովսիսյան**